



ՅՈՒՑԱԿ

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՋՄԻԱՇՆԻ ՆՈՐ ՍՏԱՅՎԱԾ
ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 314

ՍԱՂՄՈՍԵՐ

Թերթերը՝ 202:—Պրակները՝ թերթերը կազմված չեն, այլ երեք տեղից ծակված լինելով ամրացված են երեք օղակաձև մետաղներով:—Մեծությունը՝ 25,4×17,7×2,6 սմ.:—Նյութը՝ սովորական դիմացկուն թուղթ:—Կազմը՝ արվեստական սև կաշի:—Պահպանակները՝ սկզբում և վերջում մեկական դեղին թուղթ և սովորաբար:—Վիճակը՝ բավարար:—Գրությունը՝ միապուն:—Դատարկ թղթերը՝ 2ա, ինչպես նաև ձեռագրի բոլոր թերթերի 2-րդ երեսը:—Տողերը՝ անկանոն, 22—29:—Գծումները՝ տպագրված գծավոր թուղթ:—Գիրը՝ անտրոպի:—Զարդագրություն՝ չունի:—Թարգմանիչը և գրիչը՝ Տիրայր արքեպիսկոպոս Մելիք-Մուշկամբարյան (Տեր-Հովհաննիսյան), միաբան Մայր Աթոռ ս. Էջմիածնի:—Ժամանակը՝ 1936—38 թթ.:—Վայրը՝ Նյու-Յորք (ԱՄՆ):—Մանրություն՝ Մայր Աթոռի Ձեռագրատունը 1960 թ. ստացած է նվեր գրչի եղբոր որդի Տիգրան Մելիքից (Նյու-Յորք), Մայր Աթոռի դիվանապետ Հայկ Առաքելյանի միջոցով:

ԱՌՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հին Կտակարանի «Գիրք Սաղմոսաց»-ի սկզբի մասի աշխարհաբար ազատ թարգմանությունն է սա, թարգմանված նույն ինքն գրչի կողմից ոտանավորի ձևով և հանգավոր: Առաջին այս ձեռագիր մատյանն ընդգրկում է սաղմոսների Ա—Կ (1—80) 80 գլուխները:

2. Յուրաքանչյուր գլխի վերջում նշված է տվյալ գլխի թարգմանության և գրչության տարին, ամիսն և ամսաթիվը, ինչպես նաև քաղաքի անունը:

* Ծարուհանված «Էջմիածնի» ամսագրի 1964 թվականի ՌՌՌ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի ՌՌՌ Ը—Ժ-ից, 1968 թվականի ՌՌ Է-ից, 1970 թվականի ՌՌՌ Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի ՌՌՌ Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի ՌՌՌ Ա—Բ-ից, Դ-ից և 1973 թվականի ՌՌՌ Ա—Բ-ից:

3. Հին Կտակարանում չկա «Օրհնություն Մովսեսի և Իսրայելի որդիների» գլուխը, որ գրել է գրիչը իր մատյանում (տեսնել թթ. 52ա—57ա):

4. Սաղմոս ԺԹ երկու անգամ է թարգմանված, որոնք իրարից որոշ տարբերություն ունեն (տեսնել թթ. 61ա—64ա):

5. Սաղմոս ԾԱ երկու անգամ է թարգմանված, որոնք նույնպես իրարից որոշ տարբերություն ունեն (տեսնել թթ. 175ա—178ա):

ՀԻՇՍԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1ա.—Սաղմոսներ

Աշխարհաբարի վերածեց

Տիրայր արքեպիսկոպոս Մելիք-Մուշկամբարյան
Միաբան Մայր Աթոռի ս. Էջմիածնի.

Նիւ-Յորք:

Թ. 4ա.—938 Յոնուար 27, Եջ. N. York.

Թ. 16ա.—936 Նոյ. 6, Որ.

Brooklyn, N. Y.

(Յակ. Թերեքչեանի տ.):

Թ. 92ա.—937 Յոնուար 24, Կր. N. York.

Թ. 202ա.—936 Նոյ. 18, Դշ. N. Y.

(Այսպես յուրաքանչյուր մի քանի էջում կա գրչության ճշգրիտ թվականը):

№ 315

ՍԱՂՄՈՍԵՐ

Թերթերը՝ 184:—Պրակները՝ թերթերը կազմված չեն, այլ երեք տեղից ծակված են երեք օղակաձև մետաղներով:—Մեծությունը՝ 25,1×17,5×2,6 սմ.:—Նյութը՝ սովորական դիմացկուն թուղթ:—Կազմը՝ արվեստական սև կաշի:—Պահպանակներ՝ սկզբում և վերջում մեկական դեղին թուղթ և սովորաբար:—Վիճակը՝ բավարար:—Գրությունը՝ միապուն:—Դատարկ թղթերը՝ ձեռագրի բոլոր թերթերի 2-րդ երեսը դատարկ է:—Տողերը՝ անկանոն, 22—24:—Գծումները՝ տպագրված գծավոր թուղթ:—Գիրը՝ անտրոպի:—Զարդագրություն՝ չունի:—Թարգմանիչը և գրիչը՝ Տիրայր արքեպիսկոպոս Մելիք-Մուշկամբարյան (Տեր-Հովհաննիսյան), միաբան Մայր Աթոռ ս. Էջ-

միածնի:—**Ժամանակը՝ 1936—38 թթ.:**—**Վայրը՝** Նյու-Յորք (ԱՄՆ):—**Ծանոթություն՝** Մայր Աթոռի Ձեռագրատունը 1960 թ. ստացած է նվեր գրչի եղբոր որդի Տիգրան Մելիքից (Նյու-Յորք), Մայր Աթոռի դիվանապետ Հայկ Առաքելյանի միջոցով:

ԲՈՎԱՆԿԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հին Կտակարանի «Գիրք Սաղմոսաց»-ի միջին մասի աշխարհաբար ազատ թարգմանությունն է սա, թարգմանված նույն ինքն գրչի կողմից ռուսալեզուի ձևով և հանգավոր: Երկրորդ այս ձեռագիր մատյանն ընդգրկում է սաղմոսների ԿԱ—ԾԺ (61—110) 50 գլուխները:

2. Յուրաքանչյուր գլխի վերջում նշված է սովյալ գլխի թարգմանության և գրչության տարին, ամիսն և ամսաթիվը, ինչպես նաև քաղաքի անունը:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

- Թ. 3ա.—936 Նոյ. 17, Գշ., N. Y.
- Թ. 49ա.—936 Դեկտ. 12, Շք.
- Տոն Մծքնայ Հայրապետի, N. Y.
- Թ. 94ա.—937 Փետրուար 8, Բշ.
- Brooklyn, Մեծ պահոց ա. օր:
- Թ. 141ա.—938 Փետրուար 24, Եշ.
- Տոն Ա. Վարդանանց, N. York.
- Թ. 155ա.—938 Փետր. 26—27, Շք. Կր.
- Բուն Բարեկենդան, N. York.
- Թ. 184ա.—937 Յունուար 18, Բշ. N. York.

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- Թ. 137ա.—Peter P. Peterson.

№ 316

ՍԱՂՄՈՍՆԵՐ

Թերթերը՝ 223:—**Պրակները՝** թերթերը կազմված չեն, այլ երեք տեղից ծակված լինելով ամրացված են երեք օղակաձև մետաղներով:—**Մեծությունը՝** 25,5×17,5×2,7 սմ.:—**Նյութը՝** սովորական դիմացկուն թուղթ:—**Կազմը՝** արվեստական սև կաշի:—**Պահպանակներ՝** սկզբում և վերջում մեկական կապտավուն հաստ թուղթ:—**Վիճակը՝** բավարար, միայն վերջին մասը, թթ. 179—223, երկաթյա օղակներից դուրս է հանված:—**Գրությունը՝** միապուն: **Դատարկ թղթերը՝** ձեռագրի բոլոր թերթերի 2-րդ երեսը դատարկ է:—**Տողերը՝** անկանոն, 23—27:—**Գծումները՝** տպագրված գծավոր թուղթ:—**Գիրը՝** նոտրգիր:—**Ջարդագրություն՝** չունի:—**Թարգմանիչը և գրիչը՝** Տիրայր արքայիսկոպոս Մելիք-Մուշկամբարյան (Տեր-Հովհաննիսյան), միաբան Մայր Աթոռ ա. Էջմիածնի:—**Ժամանակը՝ 1936—38 թթ.:**—**Վայրը՝** Նյու-Յորք (ԱՄՆ):—**Ծանոթություն՝** Մայր Աթոռի Ձեռագրատունը 1960 թ. ստացած է նվեր գրչի եղբոր որդի Տիգրան Մելիքից (Նյու-Յորք), Մայր Աթոռի դիվանապետ Հայկ Առաքելյանի միջոցով:

ԲՈՎԱՆԿԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հին Կտակարանի «Գիրք Սաղմոսաց»-ի վերջին մասի աշխարհաբար ազատ թարգմանությունն է

սա, թարգմանված նույն ինքն գրչի կողմից ռուսալեզուի ձևով և հանգավոր: Երրորդ այս ձեռագիր մատյանն ընդգրկում է սաղմոսների ԾԺԱ—ԾԾ (111—150) 50 գլուխները (թթ. 1—127):

2. Ձեռագրի վերջին մասում կա հավելված, որտեղ աշխարհաբարի է վերածված հետևյալ բաժինները (թթ. 129—176ա).—

- Թ. 129ա.—Օրհնություն Մովսես մեծ Աստուածատես մարգարեի.
- Թ. 137ա.—Օրհնություն Մովսես Աստուածատես մեծ մարգարեի.
- Թ. 142ա.—Նոյն Մովսես մարգարեի.
- Թ. 145ա.—Աղօթք Սամուելի մօր՝ Աննայի.
- Թ. 149ա.—Օրհնություն Եսայի մարգարեի.
- Թ. 154ա.—Օրհնություն կայծակնամարտուր Եսայի մարգարեի.
- Թ. 156ա.—Աղօթք Յովնան մարգարեի.
- Թ. 159ա.—Աղօթք Ամբակում մարգարեի.
- Թ. 165ա.—Սաղմոս Դաւթի, արտաքոչ սաղմոսների թուից. ասուած այն ժամանակ, երբ ախօյեան կլա Գողիաթի դէժ՝ Սաուդի առաջ:
- Թ. 167ա.—Օրհնություն Յովհաննէս Մկրտչի հայր Զաքարիայի.
- Թ. 170ա.—Օրհնություն Մարիամ Աստուածածնի.
- Թ. 172ա.—Աղօթք Սիմէոն Ծերունո.
- Թ. 173ա.—Աղօթք Հրէաստանի Եգեկիայ արքայի, երբ հիւանդացաւ և ոտքի ելաւ հիւանդութիւնից.
- Թ. 177ա.—Ցանկ:

(Ձեռագրի հետևում կա 45 թերթ (թթ. 179ա—223ա), որտեղ աշխարհաբարի է վերածված հետևյալ սաղմոսները՝ ԻԵ, ԼԴ, ԽԱ, ԽԲ, ԻԶ, ԽԳ, ԽԴ, ՀԸ, ՀԹ, ԶԳ, ԾԱ և «Օրհնություն Մովսես Աստուածատես մեծ մարգարեի»):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

- Թ. 2ա.—937 Յունուար 17 Կր. N. York.
- Թ. 58ա.—938 Մարտ 10 Եշ.: Brooklyn, N. Y. 528 8th st.

Յ. Թերթեջեան:

- Թ. 128ա.—Յատեղումներ.
- Մասեր, որոնք գտնուում են Սաղմոսարանի մէջ և ընթերցանութեան համար են աահմանուած հոգևոր դասի և հաւատացեալների համար:
- Թ. 136ա.—1938 Ապրիլ 21 Եշ.: Ծննդեանս 71-րդ տարուայ տարելիցին աւարտեցի Սաղմոսների և իւր յատեղումների ամբողջական թարգմանութիւնը՝ գրաբատ բնագրից աշխարհաբատ, յանգաւոր տողաշարութեամբ, Տիրոջ օգնութեամբ և օրհնութեամբ՝ իմ ժողովրդի հոգևոր կարիքները լցուցանելու նպատակով:
- S. A. Ե. N. York.
- Թ. 144ա.—938 Ապր. 18 Բշ. Մտեղոց. N. York.
- Թ. 179ա.—S. A. Ե. Սաղմոսներ:
- Թ. 222ա.—936 Փետր. 28. Որ. N. York.

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- Թ. 222ա.—Peter P. Peterson.

№ 317

ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 307 (302+5):—Պրակները՝ 27, անհամաչափ: Պրակ ԻԷ՝ 4, Ա՝ 5, Թ՝ և ԺԴ՝ 9, Բ՝ 10, Է՝ և ԺԶ՝ 11, Գ, Դ, Ե, Զ, Ը, Ժ, ԺԱ, ԺԲ, ԺԳ, ԺԵ, ԺԷ, ԺԸ, ԺԹ, Ի, ԻԱ, և ԻԲ՝ 12, ԻԳ, ԻԴ, ԻԵ և ԻԶ՝ 14 թերթ:—**Մեծությունը՝** 25,5×18,5×8 սմ.:—Նյութը՝ դեղնած ե կեղտոտած հաստ թուղթ:—**Կազմը՝** կաշեպատ տախտակ, երկու երեսին ճճշումով մեծ խաչ և զարդեր են նկարված դրսի կողմից, իսկ ներսում երկու երեսին էլ կպցված է նախշավոր-գունազարդ երկու կտոր, որոնց վրա մեծատառ երկաթագրով (մոտ 4 սմ. երկազնությամբ) գրված է «ՔԱ. ՅԱ.»:—**Պահպանակները՝** ձեռագրի վերջում կա երկու թերթ մագաղաթ, որի մեկ երեսին միայն գրված է մանր երկաթագրով: Մագաղաթը վատ վիճակումն է, դեղնած և կեղտոտած: Ժամանակը՝ 10—11-րդ դարեր:—**Վիճակը՝** անքավարար:—**Գրությունը՝** երկայուն:—**Դատարկ թղթերը՝** 1Աթ, 1Բթ, 1Գթ, 1Դթ, 1Եա, 2ՅՅա, 2Յ4ա, 301թ, 302ա, 302թ:—**Տողերը՝** 19:—**Գծումները՝** ճճշումով:—**Գիրը՝** բոլորգիր:—**Զարդագրություն՝** ձեռագրի ուղի գեղեցիկ լուսանցազարդեր, թռչուններ, կենդանիների գլուխներ և կենդանիներ, գմբեթներ, խորաններ (14Յա և 2Յ5ա), սրբեր, խաչեր, թռչնազրեր, զարդագրեր, մարդագրեր և զագանագրեր: Սկզբում կա չորս թերթ համարաբառ: Բազմաթիվ մեծածավալ նկարներ կորել են ձեռագրից, պահպանվել են միայն երեքը (թթ. 2Յ2թ, 2Յ3թ և 2Յ4թ), որոնք պատկերացնում են Հիսուսի խաչելությունը, Ղազարոսի հարությունը և Հովհաննես ավետարանիչը:—**Գրիչը՝** Ներսես:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 15—16-րդ դարեր:—**Վայրը՝** անհայտ:—**Ժանդություն՝** ստացված է նվեր ներքին թեմերից: Վեհափառ Հայրապետը Ջեռագրատուն հանձնեց 1972 թ. հուլիսի 15-ին:

ՀԻՇԱՏԱԿԱՐՈՒՆՆԵՐ

Թ. 141թ.—Արճուռություն որ կարդա. գովույթի(ւն) որ լսե: Փառք փրկչին, և յիշատակ բազմամեղ գրչիս (կապգրեր Ներսես):

Թ. 299թ.—Փառք ամենատուրք Երրորդութեան այժմ և յախտեանս յախտեանից: (Կապգրեր Ներսես):

Ծնորդք և ողորմություն և գոհություն և փառաբանություն և երկրպագություն մարդասեր և բարերար Երրորդութեանն և մի աստուածութեանն Հայր և որդու և հոգույն սրբոյ յամենայն գոյից յախտեանս յախտեանից ամմէն:

Ըստ ամենատառ շնորհացն Աստուծոյ անբաւապէս հեղեալ ի մարդիկ բազմադիմիք (թ. 300ա) են տեսակք բարեաց և ճանապարհք փրկութեան որովք հնարարորհին ցիր և ճապաղ ախորժակք մարդկան. արհնակաւ ի փշտակցորդութիւն բարւոյն յարձակի, և այնու պատճառաւ ըստ չափոյ կարողութեան, յԱստուած մերձենալ և բարւոյ մասին ի միք հանդիպի: Որոց մեծն և ճշանատր արեամք չափ նահատակիլին. որպէս վկայիցն, որ է կատարելագոյն սո Աստուած ճշանակ սիրոյ և այլքն ըստ նմանէ,

կամ անճանակն նուէրք Աստուծոյ որպէս ճգնողական ժուժկալութիւնք, կամ սո ընկերս բարեգործութիւնք, որպէս սէր, ողորմութիւն, խնամրոնութիւն և այլ բազում ինչ այսպիսի: Ընդ որս և յորոց ի բարեաց մասանցն է, և գիրս աստուածայինս ստանալ ի փառս Աստուծոյ, ի շահ անձին և յազոտ հաւարակաց, ի պայծառութիւն լոման եկեղ(եց)ոյ և ի կատարումն աստուածաւանդ (թ. 300թ) կարգաց քահանայութեան, որ և տիրապէս անընդմիջաբար յԱստուծոյ տունալ ի մարդիկ մեծ և աստուածային պարգև և յետ Աստուծոյ փոխանակ Աստուծոյ արինադրաւոյ մարդկան և ուսոցիչ զկամս Աստուծոյ: Որոց ծայրք և կատարումն աստուածայնոց տառիցն Աւետարանս սրբոյ: Որ ունի յաշտնապէս ճշմարտութեամք զպատմութիւն աստուածեղէն մարդեղութեանն Քրիստոսի, այն որ զաստիկ գործումն մարդկան ազգի կանգնեաց վերստին անկապած հատատութեամք, որոց հաւատացնակ աստուածագործ տնարէնութեան նորս և փրկական ճանապարհաց նորս հետևմամք, ժամանեցն բացերես համարձակութեամք տեսանել զնա ի միս անգամ զալստեան նորս, և լսել ի նմանէ զերանակալն կոչումն:

Մին այսմ աստուածաւանդ Սուրբ Աւետարանիս ցանկացայ ես նուստ և անպիտ ... (ձեռագրի հաշորթ թերթերը կորել են, որով հիշատակարանը կիսատ է մնում):

ՀԻՇԱՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 301ա.—Յիշատակ է Սբ. Աւետարանս արգրումցի բուրջի Մեկիկ որդի տիրացու Գրիգորին և իր հանգուցեալ կողակցոյն Համասի հոյգոյն և (երկու տող բաց է թողնված) հուզոյ այս երեքս տիրցու Գրիգոր և իր կենակիցն Մարիամն և (կես տող սրբված է) ...անն վերըստին ըստացան Ծ՝ (100) որչի և ևտուն ի ձեռն Տէր Ըստեփան քահանային ի գօղն յԸրտաձոր ի դուռն Սուրբ Յակոբայ և Սուրբ Աստուածածնի եկեղեցուն յիշատակ իրեան կենդանեաց արևոյն և մնչեկեղոցն հոյգոյ ոչ ոգ եթէ կարքաոր եթէ աշխարակաւ չունի հրաման ձեռնամուխ լինելոյ կամ ծախելոյ կամ այս եկեղեցոյս համելո, եթէ որ անդրգնի կամ հանէ կամ ծախէ, պատիճն Կայէնի, մասն Ութայի և խաչադիւանաց սոցէ Սուրբ Երրորթունն իրեան հոգոյն և մարնոյն դադախազ լիցի և ասացն հրեշտակըք և մարդիք, եղիցի եղիցի ամէն: Գրեցաւ թվին ՌՄԻԳ-ին (1774 թ.—Ն. Մ.) Ունիս Ե:

№ 318

ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 283:—Պրակները՝ 22, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի ԻԲ՝ 9 և ԺԲ՝ 11 թերթից են:—**Մեծությունը՝** 22×15×7 սմ.:—**Նյութը՝** դեղնած ե կեղտոտած հաստ թուղթ:—**Կազմը՝** կաշեպատ տախտակ: Նախնական կաշյա կազմի վրա կա երկրորդ կաշյա մի երես, որի վրա կարդացվում են մի քանի բառ «Աւետարան Յա.ի Բա.ի...»: Մնացյալ բառերը անընթեմելի են:—**Պահպանակները՝** սկզբում երկու և վերջում մեկ թերթ հասարակ թղթեր

կան:—Վիճակը՝ բավարար:—Գրությունը՝ երկայուն:—Դատարկ թղթերը՝ 1ա—4ա, 262ա, 262բ:—Տողերը՝ 21:—Գծումները՝ ճշմունով:—Գիրը՝ բոլորգիր:—Զարդագրություն՝ Ջուղայի դպրոցի մանրանկարչության գեղեցիկ մի նմուշն է սույն ձևագիրը: Ունի շատ սիրուն լուսանցագարդեր, թռչուններ, ծաղիկներ, գմբեթներ, խաչեր, ինչպես նաև բազմաթիվ թռչնագրիք և զարդագրեր: Զետագրում կա մեկական խորան (թ. 5ա), գլխազարդ (թ. 159ա) և մի ամբողջական էջ, որտեղ նկարված են չորս ավետարանիչները (թ. 4բ):—Գրիչը՝ անհայտ:—Պատվիրատուն՝ Աղաջան:—Ծաղկողը՝ անհայտ:—Ժամանակը՝ 1703 թ.:—Վայրը՝ ս. Գեորգ եկեղեցի, Ապահան-Ջուղա:—Ծանոթություն՝ ստացված է նվեր Իրանից հայրենիք ներգաղթած մի հայրենակցի կողմից: Վեհապատ Հայրապետը՝ Զետագրատան հանձնեց 1972 թ. հուլիսի 15-ին:

ՀԻՇՍԱՍԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 5ա.—Թվ. Բի. ՌԷՃԳ (1703 թ.—Ն. Մ.) և լամսևանն ապրլ. Ե. շմս. ԺԶ սկիզբն:

Թ. 259բ.—Ցիշատակարան գրոյ: Փառք համագոյ զուգափառ և հաւասարապատիւ Սուրբ Երրորդութեանն Հօր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ, յառաջ բան զամենայն յարտեանս ամէն:

Ծնորոք Սուրբ Հոգոյն սկսաք Սուրբ Աւետարանս և կարողութեամբ նորին աւարտ հասուցաք: Ի թուականութեանս հայոց ՌԵՃԳ (1703 թ.—Ն. Մ.) Յունիսի ԺԹ (19) և ի շրաթ Լ, ի քաղաքիս Ասպահան՝ Ջուղայ, ընդ հովանեաւ Սուրբ Գեորգեայ հոշակաւոր եկեղեցոյս, ի թուագրութեան պարսից Ծախ Սոյթան Յուսէնի, և ի կաթողիկոսութեան հայոց Տեառն (ամունը չի գրված, տեղը բաց է թողնված), և ի առաջնորդութեանս Ջուղայոյ Տէր Աղէքսանդր արքիեպիսկոպոսին, և ի քալանթարութեան Խօջայ Ղուկասին: Որոյ այսպիսի աստուածային գանձիս փափագօղ եղեալ բարեմիտ և հեզանոգի և խոնարհամիտ և սրբաւեր և հանճարեղ պարոն Աղաջանն և ետ գրել ի հալալ վաստակոց իւրոց յիշատակ իւրն... (հաշորդ էջը կորել է, որով հիշատակարանի սնացալ մասը պակասում է):

ՀԻՇՍԱՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.—№ 217:

Թ. 4ա.—Ծնեց Ապրահամ Թումանեան 1892 ծն. թիւ, Ապրահամ Թումանեան վախճանեց 1943 թին:

Թ. 260ա.—Գրեցի որ իմանաք, Ապրահամն որ փոխեցաւ առ Աստուած ամի Տեառն 1891 յունընվարի 6: Ապրահամն որ Աստուած տվեց ամի Տեառն 1892 յունվարի 20, Այմասն որ Աստուած տվեց ամի Տեառն 1888 օգոստոսի 10:

Մատաթն որ փոխեցաւ առ Աստուած թվին 1897 Զատիկի ուրբաթ օրն: Մաղաթն որ Աստուած տվեց թվին 1899 նոեմբերի 30: Սիմոնն որ Աստուած տվեց թվին 1885 մաիսի 20:

Խողավերդին որ Աստուած տեց թին 1904ին նոեմբերի 20ին:

Ծաւերդին որ Աստուած տեց թին 1908ին մարտի 10ին:

Թօմասն որ փոխեց առ Աստուած թին 1903ին դեկտեմբերի 20-ին:

Ղուկասն որ հանքեաւ ի Տէր 11ն 1912 թ. դեկտեմբերի ամսոյ:

Սահակ Ակօթի որ Աստուած տվեց 11ն 1899 վաւումն լինի:

Թ. 260բ.—Ոսկան որ հանգեաւ առ աստուածութիւն 1913ին յունիսի 10-ին:

Այմասն որ հանգեաւ առ Աստուած 1914 թին փետրվարին 1ին:

Թումասն որ Աստուած տվ. 9 թին 1914ին:

Այմասն որ Աստուած տեց թին 1914ին:

Թեկդին որ Աստուած տուեց թին 1916ին:

Աքրահամ Թօմասեան որ ամուսնացաւ թին 1918 հոգտեմ.:

Պօղօսն որ Աստուած թին 19(1)9ին:

Մինասն որ ամուսնացաւ թին 1915ին:

1918 թին ցորեանն բեռն 30 թուման, դարմանն դիդր 2 դան առանք, վերջն մարդիքն հանկարծապի մահով մեռան և ոչխարքն չսփովն տարաւ. ելի գոյին փայ կորեքն բեռն 80 թուման սերմի համար Աստուած վկայ:

Հրիքսիմէն որ Աստուած տեց թին 1920 թն. յունվարի 1ն:

Խայնումն որ Աստուած տեց թն 1920:

Թումասն որ ամուսնացոյթիւն 1922 դեկտեմբերի: Ովայնէսն որ ամուսնացաւ 1922ին դեկտեմ.:

Թ. 261ա.—Խղիկն որ Աստուած տեց թին 1923-ին:

Մինասն որ ամուսնացաւ ի 1923ին:

Մաթեոսն որ Աստուած տեց թին. 1924 փետրվարի 10ին:

Խողավերդին որ ամուսնացաւ ի թ. 1926ին:

Սրհակն որ ամուսնացաւ թ. 1928:

Յակօթի որդի Այմասն որ հանգեաւ առ Աստուած թն 1933ին փետրարի 2ին, օրն շաբաթն:

Մայիզն որ Աստուած տեց թն. 1926ին:

Փերիզադն որ Աստուած տեց թն. 1926ին:

Թեյլուն որ Աստուած տեց 1928 թն:

Գալուստն որ Աստուած տեց 1922ին:

Սանդոյսն որ Աստուած տեց 1928ին:

Գօլխանումն որ Աստուած տեց 1927ին:

Դպգուն որ Աստուած տեց 1926ին:

Աքրահամի որդի Արշամն որ Աստուած տեց թն. 1933ին փետրվարի 18 օրն շաբաթ վայելումն լինի:

Թ. 261բ.—Թուրվանդն որ փոխեցաւ առ Աստուած թին 1946 հոկտի.:

Ակոբն որ փոխեցաւ առ Աստուած թին 1946ին: Լուսիկն որ փոխեցաւ առ Աստուած 1942:

	ծննդյան թիվը
Աքրահամյան Լուսիկ	1949 թ.
Աքրահամյան Աքրահամ	1950 թ.
Աքրահամյան Ակոբ	1953—1954 թ.
Աքրահամյան Մայիս	1955 թ. մայիսի
	1-ին գիշերվա ժամը 4-ին:
	(Շարունակելի)